

Տ. վարդապետն ուղեկցեց իշխանին մինչև երկաթուղու կայարանը, ուր նա կրկին և կրկին անգամ շնորհակալութիւն անելով իրեն եղած սիրալիր ընդունելութեան համար, ջերմ ցանկութիւն էր յայտնում ապագայում կրկին Ս. Էջմիածին այցելելու կամ այստեղի ծանօթներին իւր մօտ հիւր ընդունելու:

Այսպէս պարզ էր և համեստ մեր ընդունելութիւնը, սակայն սրտանց:

Սեպտ. 9-ին Տ. Սուքիաս Արքեպիսկոպոսը Ն. Սրբութեան հրամանով ծայրագունութեան աստիճան տուաւ Կարապետ վարդապետ Տ. Մկրտչեանին:

Սեպտեմբերի 4-ին Մայր Աթոռ դարձաւ Տ. Գրիգոր Եպիսկոպոս Գառնակերեան, որ $1\frac{1}{2}$ տարի առաջ ուղևորուել էր Երուսաղէմ՝ Ս. տեղերին երկրպագելու: Սրբազանը 3 ամիս մնացել է Երուսաղէմում և վայելել է Սրբազան Յարութիւն Ամենապատիւ Պատրիարքի և միաբանութեան սիրալիր հիւրասիրութիւնը:

Ն. Սրբութեան կոնդակով կարգադրուած է մեր ծխական դպրոցների համար թեմական տեսուչներ ընտրել Երևանի և Թիֆլիսի թեմերի մեծութեան պատճառով երկ երկու տեսուչ կընտրուին: Թեմական տեսուչների ընտրութեան դործը յանձնուած է թեմական դպրոցների հոգաբարձութիւններին: Շամախու թեմում հոգևոր դպրանոց չլինելու պատճառով, նոյն իրաւունքը յանձնուած է Բազումի ծխական դպրոցների հոգաբարձութիւններին: Թեմական տեսուչների ընտրութիւններից յետոյ՝ երբ հոգաբարձութիւնների կողմից կառաջարկուին Ն. Սրբութեան ի հաստատութիւն, յատուկ շրջաբերական կոնդակով հրահանգներ կտրուին նրանց պարտքի և իրաւանց սահմանների մասին:

Սինոդի օրագրութեամբ (3 սեպտ.) որոշուած է ծրագիր մշակել շահագործելու Մ. Աթոռի և միւս վանքապատկան կալուածները, անտառներն ու հանքերը: Այս նպատակի համար պէտք է մի ժողով գումարուի Թիֆլիսում՝ մասնակցութեամբ թեմական դպրանոցների հոգաբարձութիւնների մի մի անդամի, բացառութեամբ Աստրախանի թեմի, ուր կալուածական խնդիրներ չկան, իսկ Շամախու թեմում՝ համապատասխան հոգաբարձութիւն չլինելու պատճառով, կմասնակցէ Բագուի ծխական դպրոցի հոգաբարձութեան անդամներից մէկը: Նոյն ժողովին խորհրդակցութեան պիտի հրաւիրուին վանական կալուածների կառավարիչները, որոնք զեկուցութիւններ պէտք է տան կալուածների արդի վիճակի և իրենց առաջարկելիք ապագայ բարեփոխութիւնների մասին: Սինոդի կողմից ներկայացուցիչ և նախագահ է նշանակուած Բաբգէն վարդապետ, որ պէտք է խորհրդակցութեան հրաւիրէ պ. պ. Պօղոս Ղամբարեան, Կոստանդին Ալիխանեան, Սիմէօն Զաւարեան, Աղէքսանդր Քալանթար, Միհրան Անանեան, Աւետիք Սահակեան, Աղէքսանդր Մելիք-Աղարեան, Գրիգոր Աղաբաբեան, Նիկողայոս Քալանթարեան, Սամսոն Յարութիւնեան, Յովհաննէս Սպենդեկեան և Արշակ Թադէոսեան: Հոգաբարձութեան ներկայացուցիչների ծախսերը պէտք է հոգացուին հոգաբարձութիւնների դանձարաններից, իսկ կալուածական կառավարիչներինը կալուածական եկամուտներից առաջնորդների ձեռքով: Սինոդի հաշուապահին հրամայուած է 1898—1903 թուի մտից և ծախուց հաշիւները կազմել և յանձնել Տ. Բաբգէն վարդապետին:

Նորին Սրբութեան յատուկ կոնդակով պ. Մինաս Բերբերեան նշանակուած է ճեմարանի տեսուչ: Պ. Բերբերեանը անյայտ անձնաւորութիւն չէ, նա երկար տարիներ աշխատել է իւրովսանն մեր գրական և հասարակական գործունէութեան ասպարէզներում: Իւր սկզբնական ու-

սումն ստացել է Ն. Նախիջևանի թեմական դպրանոցում, ապա փոխադրուել է Լազարեան ճեմարան, ու դիմնադիտական դասընթացքն աւարտելուց յետոյ՝ մտել է Մոսկուայի համալսարանը։ Բարձրագոյն ուսումը վերջացնելուց յետոյ, 1894₃ ուսումնական տարին ճեմարանում ուսուցչութեան պաշտօն ունէր ռուսաց գրականութիւնից և պատմութիւնից։ Վերջին տասը տարին նա պատուաւոր դասաւորի պաշտօն էր կատարում Ռոստովում։ 1905 թ. վերջերին ստիպուած էր հեռանալ Ֆինլանդիա, որտեղից Ն. Սրբութեան հրամանով կոչուեցաւ ներկայ պաշտօնին։ Պ. Բերբերեանը 1891 թուից ի վեր աշխատակցել է զանազան հայ և ռուս թերթերի և հրատարակութիւնների։ Նորա գրութիւնների նիւթ են կազմում հասարակական և քաղաքական հարցերը և գրական երիւյթները հայ և օտար կեանքից։

Զորսամսեայ դադարումից յետոյ՝ լոյս տեսաւ «Մշակ» լրագիրը սեպտեմբերի 6-ին։

Միամեայ ընդմիջումից յետոյ՝ հրատարակուեցաւ «Լուսնայ» ամսագիրը։ Ստացուած են 1906 թ. № 7—8 յուլիս ու օգոստոս ամիսների համարը, որով փակուում է անցեալ տարին, իսկ ներկայ տարուայ երկրորդ կիսամեակից պիտի հրատարակուի կանոնաւոր, աւելի փոքր ծաւալով, որի համար և բաժանորդագինը 8 ռուբլուց իջեցրած է 6-ի։ Ներկայ կիսամեակի № 1—2 յուլիս—օգոստոս ամիսների համարը տպագրուած է մաքուր և գեղեցիկ։

